2/32 51 12897

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«12» 12 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000125

Ձեռնարկողը՝ ***«Ապրիում պրո ստուդիո» ՍՊԸ***
ք. Երևան, Մ Բաղրամյան 1 փկղ. 14 շենք

Գործունեությունը՝ ***«Արմավիր-4» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն***
Արմավիրի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարգյան

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000125

<18> 12 2020թ.

Արմավիրի մարզի «Արմավիր-4» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Ատրիում պրո ստուդիո» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	ՄՄՀՏՊՓ նախագծեր, շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման ՇՄԱՌԳ հաշվետվություն
Փաստաթղթի տեսակը՝	Հիմնադրութային փաստաթուղթ
Իրականացման վայրը՝	Արմավիրի մարզի Արմավիր-4 միկրոռեգիոնում ընդգրկված 12 գյուղական համայնքներ

Ներածական մաս Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 1-ին մասի՝ «Արմավիր-4» ՄՄՀՏՊ փաստաթուղթը հանդիսանում է քաղաքաշինության բնագավառին վերաբերող հիմնադրութային փաստաթուղթ:

ՄՄՀՏՊ նախագիծն իրենից ներկայացնում է փաստաթուղթ, որտեղ արտացոլված են ծրագրի ազդեցության ենթակա տարածքների բնական ռեսուրսների և շրջակա միջավայրի բաղադրիչների (օդ, ջուր, հող, կենսաբազմազանություն) արդյունավետ և ռացիոնալ օգտագործման նպատակով՝ նախագծային պրակտիկ լուծումներով տնտեսության ճիշտ կազմակերպում, բնակավայրերի և կոմունիկացիաների ճիշտ տեղադրում՝ անթափոն տեխնոլոգիաների և մաքրման սարքավորումների կիրառմամբ, կենցաղային և արդյունաբերական թափոնների մաքսիմալ օգտագործմամբ, կամ վերջիններիս վնասազերծմամբ:

Նկարագրական մաս «Արմավիր-4» ՄՄՀՏՊ փաստաթղթերի նախագծերը ներառում են՝ Ալաշկերտ, Այգեշատ, Արգավանդ, Արմավիր, Արևիկ, Բամբակաշատ, Հայկական, Մրգաշատ, Նորապատ, Ջանֆիդա, Տանձուտ, Փշատավան (ընդամենը 12) գյուղական համայնքներ:

Միկրոռեգիոնը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևմտյան մասում: Գեոմորֆոլոգիական տեսակետից իրենից ներկայացնում է թույլ ալիքաձև հարթավայր՝ հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք հավասարաչափ թեքվածությամբ հարթ ռելիեֆով: «Արմավիր-4» տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագիծն ընդգրկում է 11528.17 հա մակերեսով տարածք, որտեղ բնակչության թիվը կազմում է 35333 մարդ:

Սույն փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերլուծությունները կատարվել են նախագծի դրույթներին համապատասխան, հաշվի առնելով ծրագրում ներառված համայնքների 2017-2021 թթ. զարգացման ծրագրերը:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT CENTRE
02543163
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Ծրագրում ընդգրկված գյուղական համայնքների տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման և շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար փաստաթղթում համալիր կերպով գնահատվել են գոյություն ունեցող իրավիճակը և առկա բնապահպանական խնդիրները և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրներ:

Շրջանի կարևորագույն ջրագրական միավորը Արաքս գետն է, որը սկիզբ է առնում Բյուրակն հրաբխային բարձրավանդակից (մոտ 3000մ բարձրությունից): Շրջանի հիմնական ջրային զարկերակը հանդիսանում են Արաքս և Ախուրյան սահմանային գետերը: Միկրոռեգիոնում ներառված գյուղական համայքները գտնվում են Ախուրյան ջրավազանային կառավարման տարածքում: Գրունտային ջրերի հորիզոնի սնման և բեռնաթափման կարևորագույն գործոն է Արաքս գետը: Տարածքում հանդիպող գրունտային ջրերը պատկանում են ալյուվիալ-դելյուվիալ, պրոլյուվիալ նստվածքներին և սնվում են մակերևույթային հոսքի, մթնոլորտային տեղումների, ենթահունային ջրերի և արտեզյան հորատանցքերի արտանետման ջրերից: Դրանք տարածքում հիմնականում հանդիպում են 6-7մ խորը, իսկ տեղ-տեղ մինչև 5-5.5մ: Նկարագրվող տարածաշրջանում երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը կազմում է 8-9 բալ և ավելի:

Տարածքում առկա են բնական, բուժական, առողջապահական, հանքահումքային ռեսուրսներ, գեղատեսիլ և տեսարժան վայրեր, որոնք նպաստավոր են տուրիզմի զարգացման համար: Ներկա իրավիճակում բնակչության հիմնական զբաղմունքն է՝ բուսաբուծությունը, այգեգործությունը, անասնապահությունը, հացահատիկային կուլտուրաների մշակությունը, հողագործությունը, խաղողագործությունը, մեղվաբուծությունը և առևտուրը:

«Արմավիր-4» միկրոռեգիոնի գյուղական համայնքներում առկա են սոցիալ-կենցաղային, ինժեներա-տրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների հետ կապված հիմնախնդիրներ, որոնց համար համայնքների զարգացման ծրագրերում սույն փաստաթղթով առաջարկվել են հեռանկարային զարգացման ուղղություններ:

Ծրագրում ընդգրկված «Արմավիր-4» տարածաշրջանի համայնքների սոցիալական միջավայրի և շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումն՝ արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի հատվածի ջեռուցման և ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրերի աղտոտումն՝ արտադրական հոսքաջրերով և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտումը՝ կոշտ կենցաղային թափոններով,
- աղմուկը,
- անտառի անկանոն օգտագործումը, ինչը էներգետիկ ճգնաժամի տարիներին հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:

Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցություն ունեցող բնական գործոններից են՝ սողանքները, սելավները և հողերի էրոզիան:

Ներկայումս ծրագրի ազդեցության ենթակա համայնքներում մթնոլորտային օդն աղտոտվում է արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման, անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումներով: Մթնոլորտ արտանետումների 92.8%-ը բաժին է ընկնում ավտոտրանսպորտին: Համայնքներում առկա ձեռնարկությունները գործում են պլանային արտադրողականության 5-10%-ի սահմաններում: Արդյունաբերական

02543163
ЕЗРАКАЦЮТЮН
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

արտանետումները զգալի չեն և բոլոր աղբյուրներից ընդհանուր արտանետումների քանակները կազմում են 23,18 տ/տարի: Համայնքներում ֆոնային աղտոտվածության մակարդակն աղտոտող բոլոր նյութերով զգալիորեն ցածր է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից (ՍԹԿ): Հեռանկարում ձեռնարկությունների համար նախատեսված 5-10% արտադրողականության աճի դեպքում արդյունաբերական արտանետումները կկազմեն 25,7 տ/տարի:

Ներկա դրությամբ բոլոր համայնքները գազաֆիկացված են: Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը ջեռուցումից, արդյունաբերությունից և ավտոտրանսպորտից կազմում է 1212,34 տ/տարի, իսկ մթնոլորտ վնասակար արտանետումներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը հաշվարկվել է 30,8 մլն. դրամ տարի: Հեռանկարում մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը ջեռուցումից, արդյունաբերությունից և ավտոտրանսպորտից հաշվարկվել է 1295,83 տ/տարի, հաշվի առնելով գազի ծախսը-70%, էլեկտրաէներգիան–15%, արևային էներգիան–15%: Ի հաշիվ ջեռուցման նոր տեխնոլոգիաների կնվազեն նաև մթնոլորտային արտանետումները և մթնոլորտ վնասակար արտանետումներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը կկազմի 33,84 մլն. դրամ տարի:

Տարածքի համալիր գնահատականը վերլուծվել է տեղանքի կլիմայական պայմանների, մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակի, արդյունաբերական պոտենցիալի, բնակչության և ավտոտրանսպորտի խտության ցուցանիշների հաշվառմամբ: Անտրոպոգեն թույլ ազդեցության գոտին, «Արմավիր-4» ՄՄՀՏՊՓ տարածաշրջանի համայնքների համար կազմում է 11528.17 հա, տարածքի համալիր գնահատականը համարվում է բարենպաստ: Հեռանկարում, բոլոր ձեռնարկությունների համար նախատեսված արտադրողականության աճի դեպքում տարածքի համալիր գնահատականը ևս կլինի բարենպաստ:

Ներկայումս գետերի աղտոտվածության հիմնական պատճառ է հանդիսանում ՄՄՀՏՊՓ ընդգրկված բնակավայրերի տնտեսակենցաղային հոսքաջրերը, որոնք առանց մաքրվելու թափվում եմ գետավազանների մեջ՝ ստեղծելով հակասանիտարական վիճակ: Տնտեսակենցաղային հոսքաջրերի մի մասը հեռացվելով Ախուրյան գետ, հանդիսանում է գետի աղտոտվածության հիմնական աղբյուրը, ինչի պատճառով վերջին տարիներին Ախուրյան գետի կիրճում զանազան սպասարկման օբյեկտների շահագործման արդյունքում զգալիորեն ավելացել է գետի աղտոտվածությունը, արդյունքում «Արմավիր-4» համայնքների սահմաններում գետի օգտագործումը ռեկրեակցիոն նպատակով բացառվում է: Գետ թափվող հոսքաջրերի հետևանքով շրջակա ջրային ավազանին հասցված տնտեսական վնասը ներկա դրությամբ գնահատվում է տարեկան 24,92 մլն. դրամ:

Նախագծով նախատեսվում է գյուղական համայնքների համար կառուցել կեղտաջրերի մաքրման կայաններ: Գյուղական համայնքների աշխարհագրական դիրքը թույլ չի տալիս «Արմավիր-4» ամբողջ տարածաշրջանի համար մեկ միասնական կեղտաջրերի մաքրման կայանի ընտրություն: Տնտեսակենցաղային հոսքաջրերի մաքրման համար նախատեսված է տեղադրել տարբեր արտադրողականության «Յալմա-2000» մակնիշի կենսաբանական մաքրման կայաններ. ինչը կապահովի 98% մաքրման արդյունավետություն և կունենա բազմաստիճանային մաքրման կառուցվածք, սեպտիկ խուց, անաերոբ կենսաբանական ռեակտոր, պարզարան, և այլ կառույցներ:

«Արմավիր-4» ՄՄՀՏՊ փաստաթղթում ներառված 12 գյուղական համայնքներում ընդգրկված հողերի մակերեսը կազմում է 11528.17 հա: Միկրոռեգիոնի բնակչության հաշվարկային թիվը հեռանկարում կկազմի 38866 մարդ: Պահուստային հողերը տարածաշրջանում բացակայում են: Նախագծով նախատեսված հողերի նպատակային

նշանակության, հողատեսքերի գործառական նշանակության փոփոխությունները ներկայացվում են ստորև.

«Արմավիր-4» հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներ

Արմավիր - 4 հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներ (Զև 3)			
ՑՈՒՑԱՆԻՇԸ	ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐԸ	ՓԱՍՏԱՑԻ	ՀԵՌԱՆԿԱՐԱՑԻՆ
1	2	3	4
Համայնքի, համակցված փաստաթղթի դեպքում նախագծվող համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը	հա	11528.17	11528.17
Բնակավայրերի հողեր	հա	2724.21	2739.989
Արդյունաբերության, ընդերքօգտագործման եվ այլ արտադրական նշանակության հողեր	հա	228.22	191.6
Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, Կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից՝	հա	144.48	193.39
Հատուկ պահպանվող տարածքների հողեր	հա	51.58	7.546
Հատուկ նշանակության հողեր	հա	74.07	74.07
Գյուղատնտեսական նշանակության հողեր	հա	7555.68	7539.235
Անտառային հողեր	հա	0	0
Ջրային հողեր	հա	749.93	782.34

Հողի աղտոտման հիմնական աղբյուրներն են հանդիսանում՝ ավտոտրանսպորտի, արդյունաբերական ձեռնարկությունների փոշեգազային մթնոլորտային արտանետումները, ինչպես նաև արդյունաբերական և կենցաղային թափոնները: Համայնքների տարածքների հողերի վերաբերյալ վերլուծությունների արդյունքների համաձայն՝ հողերն աղտոտված չեն ծանր մետաղներով, հողերի աղտոտվածության մակարդակը գնահատված է ցածր, էկոլոգիական իրավիճակը՝ բավարար: Ծրագրով նախատեսված նոր արդյունաբերական ձեռնարկությունների և հասարակական շինությունների կառուցումը և գործարկումը չեն հանգեցնի հողի լրացուցիչ դեգրադացման և աղտոտման: Մթնոլորտ արտանետվող փոշին իր մեջ չի պարունակի ծանր մետաղների տարրեր և հողն աղտոտող բաղադրիչների կոնցետրացիաները չեն գերազանցի սահմանային-թույլատրելի նորմերը: Շրջանում առկա են աղուտ-ալկալի հողեր, որոնք աչքի են ընկնում խիստ թույլ հումուսացվածությամբ (մինչև 1%), բարձր հիմնայնությամբ, կարբոնատների զգալի պարունակությամբ (15-18%), շերտավորված մեխանիկական կազմով: Աղակալման դեմ ՀՀ կառավարության կողմից պետք է ներդրվի մեծ գումարներ Արմավիրի մարզում նոր ջրանցք կառուցելու համար: Միկրոռեգիոնում որոշակի տարածում ունեն նաև ճահճացած տարածքները:

«Արմավիր-4» միկրոռեգիոնի տարածքում Արազափի և Մերձաքսյան սահմաններում առանձնացված է ընդերքօգտագործման աշխատանքների արդյունքում խախտված ավազի և կոպճախճի հանքավայրեր, որոնց շահագործման արդյունքում լանդշաֆտը ենթարկվել է դեգրադացիայի բացասական ազդեցություն թողնելով շրջակա միջավայրի վրա: Հեռանկարային ժամանակահատվածում նախատեսված է վերականգնել միկրոռեգիոնի տարածքում շահագործված և շահագործվող օգտակար հանածոների հանքավայրերի խախտված տարածքները: Ռեկուլտիվացման/վերականգնման աշխատանքները կներառեն երկու փուլեր՝

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

կենսաբանական և տեխնիկական: Կենսաբանական եղանակը կկիրառվի այն գրունտերի համար, որտեղ էրոզիան կանխարգելելու նպատակով անհրաժեշտ կլինի ստեղծել բուսական շերտ: Հողի աղտոտման կանխարգելման և էռոզիայից պահպանման միջոցառումների շարքին է դասվում նաև համայնքային տարածքների կանաչապատումը, թափոնների կառավարումը և այլն:

Բնակավայրերում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 2685.08 հա մակերես, իսկ գործող աղբավայրերի ընդհանուր քանակը համայնքներում 12-ն են:

Աղբահանումը կատարվում է անկանոն ձևով՝ հանգեցնելով համայնքներում հակասանիտարական վիճակի: Համայնքներում առաջացած կենցաղային կոշտ թափոնների տարեկան քանակը ներկա իրավիճակում՝ 35333 մարդու համար կազմում է 8833,25 տ/տարի: Հեռանկարում, 38,866 հազ. մարդ բնակչության քանակի դեպքում թափոնների ընդհանուր հեռանկարային քանակը կկազմի ~ 9716,5 տ/տարի: Արդյունաբերական թափոնների ընդհանուր քանակը կազմում է 3,5 տ/տարի, որից օգտագործման ենթակա 1,1 տ/տարի թափոնների քանակը ներկայումս հեռացվում են կենցաղային թափոնների աղբավայր, քանի որ արդյունաբերական թափոնների համար համայնքները չունեն համապատասխան աղբավայր: Օրգանական ծագման թափոններ են առաջանում առողջապահության բնագավառի հաստատություններում /որից՝ 1.2 տ/տարի ոչ վարակիչ, իսկ 0.07տ/տարի վարակիչ, որոնք վնասազերծման նպատակող ինչպես ներկայում, այնպես էլ հեռանկարում հանձնվելու են լիցենզավորված կազակերպությունների:

Արմավիրի մարզպետարանի կողմից առաջարկվել է «Արմավիր-4» միկրոռեգիոնի բոլոր 12 համայնքների համար նախատեսել աղբի հեռացման վայր՝ տեսակավորման և վերամշակման համար, միաժամանակ կոնսերվացնելով նշված համայնքներում առկա աղբավայրերը:

«Արմավիր-4» միկրոռեգիոնի համայնքներում տեղակայված են 12 գերեզմանոցներ, /ընդհանուր 32 հա տարածքում/, որոնք գործող են: Գերեզմանոցներում ներկայումս սանիտարական պահպանման գոտին ապահովված չէ: Նախագծով նախատեսված է գերեզմանոցների պարսպապատումը ՍՊԳ-ի չափերով՝ հետագա հուղարկավորումների ընթացքում այն չխախտելու համար: Այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում:

«Արմավիր-4» միկրոռեգիոնի համայնքների կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար անհրաժետ է իրականացնել գործողությունների համալիր ծրագիր, որն իր մեջ կպարունակի՝ համայնքապետարաններում մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում, նոր տարածքների կանաչապատման իրականացում՝ նախագծերին և ծրագրերին համապատասխան, ոռոգման համակարգի բարելավում: Այդ նպատակի համար նախատեսված են այգիներ, կանաչ գոտիով սպորտ-հրապարակներ, շրջանային նշանակության կանաչ գոտիներ և այլն: Նախագծված են նաև մայրուղային ճանապարհների, գերեզմանոցի և այլ օբյեկտների պահպանության գոտիների կանաչապատում:

Ներկա դրությամբ Արմավիր-4 ՄՄՀՏՊՓ ընդգրկված համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների (զբոսայգիներ, պուրակներ և այլն) ընդհանուր մակերեսը կազմում է 1.7հա: Հեռանկարում սահմանափակ օգտագործման կանաչ տարածքների մակերեսը կկազմի 2451,789 հա, իսկ իսկ ընդհանուր օգտագործման

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

կանաչ տարածքները՝ 46,64հա, գյուղական համայնքներում հասցնելով 12 մ²/մարդ, իսկ փոքր քաղաքների համար՝ 10 մ²/մարդ:

«Արմավիր-4» միկրոռեգիոնի համայնքներում հեղեղատար կոյուղու բացակայության արդյունքում գարնանային ձնհալի և աշնանային հորդ անձրևների ժամանակ հնարավոր են տարածքների հեղեղումներ: Բնակավայրերին բնորոշ է հեղեղային ձորակների, ինչպես նաև սողանքային երևույթների տարածումը: Այս երևույթից խուսափելու նպատակով բոլոր համայնքերի համար նախագծով առաջարկված է հեղեղատար առուների նախագծում և կառուցում: Սույն նախագծով առաջարկված է «Արմավիր-4» բնակավարի սողանքներից պաշտպանության միջոցառումների նախատեսում:

Արմավիրի մարզում զգալի կերպով բարձրացել են ջրային ռեսուրսների հանքայնության աստիճանը: Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելը, ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակը բարելավելու և հորատանցքերի օգտագործումը կանոնակարգելու նպատակով առաջարկվում է՝

- Արմավիրի մարզում հորատանցքերի գույքագրում և ավարտից հետո ծրագրավորել վերականգնման, վերանորոգման և լիկվիդացման ենթակա ինքնաշատրվանող հորատանցքերի անհրաժեշտ քանակը,
- գնահատել վարչական տարածքում գործող հորատանցքերի հաշվեկշռային պատկանելիությունը:
- ձկնաբուծական տնտեսությունների ջրավազանները նախագծելիս ղեկավարվել բնապահպանական նորմերով, նախատեսել դրենաժային և շրջանառու ջրամատակարարման ցանցեր:

Ջրային ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու և հսկողությունն իրականացնելու նպատակով ճնշումային և ոչ ճնշումային հորատանցքերում ապահովել ջրաչափական սարքերի տեղադրումը և ելքերի գրանցումը:

ՇՄԱՌԳ հաշվետվությանը կից փաստաթղթերում վերլուծվել է նաև «Արմավիր-4» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքների բնակավայրերին սպառնացող բնածին վտանգները և /կարկուտ, քամի, հեղեղ, սելավ/ վտանգավոր երկրաբանական երևույթները /սողանքներ/ և հնարավոր արտակարգ ռիսկերը և առաջարկվել են նախագծային լուծումներ:

Համայնքների տարածքային զարգացման համար առաջնահերթ ընտրվել են այնպիսի ուղղություններ, որոնց համար ներդրումները նպաստավոր կլինեն տարբեր ոլորտների զարգացման համար և կխթանեն.

- արտադրության հիմնական ճյուղերի զարգացմանը,
- հնարավոր ռեկրեացիոն գոտիների կազմակերպմանը,
- շրջակա միջավայրի բարելավմանը և պահպանմանը,
- ինժեներական ենթակառուցվածի, ճանապարհային ցանցի և սոցիալ- կենցաղային համակարգի զարգացմանը,
- պատմամշակութային ժառանգության պահպանությանը,
- բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը,
- սահմանամերձ տարածքներում բնակչության անվտանգության ապահովմանը,
- երկրորդական և միջգյուղական ճանապարհների բարելավմանը և բարեկարգմանը,

Տարածաշրջանում, նախագծային ժամանակաշրջանում շրջակա միջավայրի պահպանության, բնապահպանական իրավիճակի բարելավման և բնակչության կենսամակարդակի բարձրացման համար ծրագրով նախատեսված առաջնահերթ և հեռանկարային միջոցառումների շարքում ներառված են.

ՀՀ ՍՊՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
«ԷԿՍՊԵՐՏԻԶ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ENVIRONMENTAL STATE ORGANIZATION OF EXPERTISE»
ՀՀ ԵՐԵՎԱՆ
02543183
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- ճահճացած տարածքների չորացումը և բարելավումը,
- ընդերքօգտագործման հետևանքով խախտված տարածքների վերականգնումը/ռեկուլտիվացիան,
- համայնքներում բնակչության ապահովումը խմելու ջրով,
- կոյուղու համակարգերի բարելավումը,
- համայնքներում ոռոգման ցանցի արդիականացումը և բարելավումը,
- սանիտարական գոտիների պահպանմամբ աղբավայրերի նախատեսումը,
- անձրևաջրերի հեռացման համակարգի կառուցումը,
– գետեր թափվող տնտեսակենցաղային և արտադրական հոսքաջրերի համար կենսաբանական մաքրման կայանի կառուցումը,
– տարածաշրջանում մսի վերամշակման արտադրամասի կազմակերպումը (սպանդանոցի կառուցում), շարժական ջերմային սարքերի ներդրմամբ օրգանական թափոնների վնասազերծումը,
– համայնքների տարածքներում աղբահանման կետերի կազմակերպումը, ժամանակակից պահանջներին համապատասխան աղբավերամշակման գործարանի կառուցումը,
– ճանապարհի եզրերին, հանգստի գոտիներում կանաչապատման իրականացումը,
– մեքենաների տեխնիկական վիճակի վերահսկողության սահմանումը ավտոտրանսպորտի արտանետումների կրճատման նպատակով:

Եզրափակիչ մաս «Արմավիր-4» ՄՄՀՏՊ փաստաթղթում ընդգրկված գյուղական համայքների համար առաջարկված քաղաքաշինական լուծումների իրականացման և շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար, ՇՄԱՌԳ հաշվետվությունում համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնց միջոցով հնարավոր կլինի ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները: Քանի որ նախագծով նախատեսված միջոցառումներն իրականացվելու են բնակավայրերի արդեն իսկ կառուցապատված տարածքներում, հետևաբար նախագծված համակարգերի վերակառուցման աշխատանքների ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ, իսկ բուսատեսակներին և կենդանատեսակներին հասցվող վնասը՝ նվազագույն:

«Արմավիր-4» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծը ներառում է մշտադիտարկում (մոնիթորինգ) և հետնախագծային վերլուծություն, ինչը քույլ կտա հիմնադրույթի գործունեության ընթացքում վերլուծել և դիտարկել համայնքների զարգացման իրատեսական սցենարները՝ նախանշելով առավել առդյունավետ և արդիական հեռանկարային ուղղությունները: Փաստաթղթի փորձաքննական գործընթացին մասնակցել է առողջապահության նախարարությունը, շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումները, որոնց կողմից ներկայացված դիտողություններով և առաջարկություններով ՇՄԱՌԳ հաշվետվությունը լրամշակվել է: Ծրագրի ազդեցության ենթակա համայնքների հանրությունը հանրային քննարկումների ձևով մասնակցել է հաշվետվության գնահատման և փորձաքննական գործընթացներին:

Փորձաքննական պահանջ

Հիմնադրութային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը մինչև

իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ատրիում պրո ստուդիո» ՍՊԸ կողմից ներկայացված Արմավիրի մարզի «Արմավիր-4» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան